ՀՈԳՈՒ ԽԱՂԱՂՈՒԹՅՈՒՆԸ

ԳՈՐԾ. 12:1-19

KATE SPADE AND ANTHONY BOURDAIN. ԿԻԵՎՅԱՆ ԿԱՄՈՒՐՋ

- **U.S. AMONG MOST DEPRESSED COUNTRIES IN THE WORLD.**
  - **INDIA, CHINA, AND U.S. ARE THE COUNTRIES MOST AFFECTED BY ANXIETY. (EUROPE, MONACO, NORWAY, BELGIUM, NETHERLAND...)**

ՍՈՒՐԲԳՐԱՅԻՆ ՀԱՏՎԱԾ.

1 Այն ժամանակ Հերովդէս թագավորը ձեռք գցեց, որ եկեղեցուց մի քանիսին չարչարի: 2 Եւ Հակոբոսին՝ Հովհաննէսի եղբօրը, սրով սպանեց: 3 Եւ տեսնելով որ Հրէաներին հաճելի է, նորա վրա Պետրոսին էլ բռնեց. (և բաղարջակերաց օրերն էր:) 4 Նորան երբ որ բռնեց՝ բանտը դրաւ, և մատնեց չորս կարգ չորսական զինուորների որ պահեն նորան. Եւ կամենում էր զատկից հետո նորան բերել ժողովրդի առաջին: 5 Եւ Պետրոսը բանտում պահուած էր. Բայց նորա համար անդադար աղօթք էր լինում եկեղեցուց դէպի Աստուած:

I. Ի՞նչ է ձեր մտքով անցնում երբ լսում եք Հերովդես անունը:

- **Հերովդէս I**

  Մատ. 2:16 - 16 Այն ժամանակ Հերովդէսը տեսնելով թէ խաբուեցաւ մոգերից, շատ բարկացաւ. Եւ ուղարկեց կոտորեց այն ամեն երեխաներին, որ Բեթլեհէմում եւ նորա չորս կողմերումն էին. երկու տարեկաններին եւ նորանցից ցածերին, այն ժամանակին նայելով որ ստուգեց մոգերիցը:

- **Հերովդէս Ագիպպաս I**

  *1 Այն ժամանակ Հերովդէս (Agrippa) թագավորը ձեռք գցեց, որ եկեղեցուց մի քանիսին չարչարի: 2 Եւ Հակոբոսին՝ Հովհաննէսի եղբօրը, **սրով սպանեց**:*

- **Հերովդէս Անտիփաս I**

  Մար. 6:17, 27 - 17 Որովհետեւ Հերովդէսն ինքն ուղարկեց, Հովհաննէսին բռնեց եւ նորան կապեց բանտի մէջ իր եղբոր՝ Փիլիպպոսի կին Հերովդիայի համար, որ կին էր առել նորան: 27 Եւ թագավորը շուտով դահիճ ուղարկեց եւ հրամայեց նորա գլուխը բերել. Նա էլ գնաց գլուխը կտրեց բանտի մէջ:

- **(Հերովդէս) Փելիքսը**

  Գործ. 24:27 - 27 Եւ որովհետեւ Փելիքսը կամեցաւ Հրէաներին մի շնորհք անել, Պօղոսին կապած թողեց:

- **Հերովդէս Ագիպպաս II**

  Գործ. 26:1 - 1 Եւ Ագիպպասն ասեց Պօղոսին. Թույլ է տրվում քեզ խօսեալ քո մասին. այն ժամանակ Պօղոսը ձեռքը մեկնեց եւ պատասխան էր տալիս.

  27 Հաւատո՞ւմ ես մարգարէներին, ով Ագրիպպաս արքայ. գիտեմ որ դու հաւատում ես: 28 Ագրիպպասն էլ Պօղոսին ասեց. քիչ է մնում որ ինձ համոզես որ քրիստոնիա դառնամ:

*6 Եւ երբոր Հերովդէսը կամեցաւ նորան դուրս բերել, այն գիշերը Պետրոսը **քնած էր երկու զինուորների մէջ երկու շղթայով կապուած.** Եւ պահապանները դռան առաջին բանտը պահպանում էին: 7 Եւ ահա Տիրոջ հրեշտակը կանգնեց, և **տան մէջ** լոյս ծագեց. Եւ խթեց Պետրոսի կողին՝ նորան արթնացրեց և ասեց. Վեր կաց շուտով. Եւ **շղթաները վայր ընկան** նորա ձեռներից: 8 Եւ հրեշտակն ասեց նորան. **Գօտիդ կապիր** և **հողաթափներդ հագիր** ոտներիդ, և նա այնպէս արաւ. Եւ ասեց նորան. **Հանդերձներդ քեզ վրա գցիր** և իմ ետևից եկ: 9 Եւ նա դուրս եկաւ գնում էր նորա ետևից, և չ՚գիտէր թէ ճշմարիտ է հրեշտակից եղածը. Որովհետև կարծում էր թէ երազ է տեսնում: 10 Եւ երբոր նորանք անցան առաջի պահապաններից և երկրորդից, եկան մինչև երկաթի դուռը որ դէպի քաղաքն էր տանում. դարպասը իրեն-իրեն բացվեց նորանց համար, և դուրս գալով մի փողոց անցան, և շուտով հրեշտակը նորանից հեռացաւ: 11 Եւ Պետրոսը ինքն իրան գալով ասեց. Հիմա ճշմարիտ իմացա, որ Տէրն իր հրեշտակն ուղարկեց, և փրկեց ինձ Հերովդէսի ձեռից, և Հրէաների ժողովրդի բոլոր սպասած բաներից:*

II. Ի՞նչպես ենք արձագանքում երբ թշնամին հարձակվում է ձեր հոգու վրա:

- **Շատ կարևոր է հիշել Տիրոջ խոստումները մեր փրկության, խաղաղության և ապագայի հետ կապված:**

  Պետրոսը քնած էր երկու զինուորների մէջ երկու շղթայով կապուած.

  1. **Խոստում փրկության մասին**

     Սաղ. 27:1 - 1 Տէրն է իմ լոյսը եւ իմ **փրկությունը**, ես ումի՞ց պիտի վախենամ. Տէրն է իմ կեանքի զօրությունը, ես ումի՞ց պիտի սարսափեմ։

  2. **Խոստում խաղաղության մասին**

     Փիլիպ. 4:7 - 7 Եւ Աստուծո խաղաղությունը, որ ամեն մտքից վեր է, կպահպանէ ձեր **սրտերն** ու **միտքերը** Քրիստոս Հիսուսում։

     Առողջ մարմին ունենալու համար պետք է ունենալ առողջ միտք, հասկացողություն և սիրտ:

     Հով. 14:27 - 27 Խաղաղութիւն եմ թողում ձեզ, իմ խաղաղութիւնն եմ տալիս ձեզ. որ տարբեր է այս աշխարհի տված խաղաղությունից. ձեր սիրտը չխռովի եւ մի վախեցեք։

  3. **Խոստում քո ապագայի մասին**

     Հով. 21:18 - 18 Ճշմարիտ ճշմարիտ ասում եմ քեզ, երբոր պատանի էիր՝ ինքդ էիր գօտիդ կապում՝ եւ ման գալիս որտեղ որ ուզում էիր. բայց երբոր կծերանաս, **ձեռքերդ կմեկնես**. եւ ուրիշը գօտի կկապի, եւ կտանի՝ որտեղ որ չես ուզիլ։

8 Եւ հրեշտակն ասեց նորան. Գօտիդ կապիր և հագիր հողաթափերդ ոտներիդ, և նա այնպէս արաւ. Եւ ասեց նորան. Հանդերձներդ քեզ վրա գցիր և իմ ետևից եկ:

Այսօր Աստված նույն պատվերն է տալիս մեզ.

Եփ. 6:11-18 - 11 Եւ Աստուծո սպառազինությունը հագէք, որ կարող լինէք սատանայի հնարքներին հակառակ կանգնել: 12 Որովհետեւ մեր պատերազմը արյունի եւ մարմնի հետ չէ, այլ իշխանությունների եւ պետութիւնների հետ, այս աշխարհի խավարի աշխարհակալների հետ, այն չար հոգիների հետ որ երկնավորների մէջ են: 13 Սորա համար Աստուծո սպառազինությունն առէք, որ կարող լինէք հակառակ կենալ չարության օրում, եւ ամենը կատարելով հաստատ կանգնել. 14 Արդ հաստատ կանգնեցէք ձեր մէջքերը ճշմարտությամբ զօտեվորուած, եւ արդարության զրահը հագած, 15 Եւ ձեր ոտները կօշիկ հագած խաղաղության ավետարանը քարոզելու պատրաստությունով: 16 Եւ ամենի վրա հավատքի վահանն առէք. որով կարող լինէք չարի ամեն կրակոտ նետերը հանգցնել: 17 Եւ փրկության սաղավարտն առէք, եւ Հոգու սուրը՝ որ Աստուծո խօսքն է: 18 Ամեն աղօթքով եւ աղաչանքով աղօթք արէք ամեն ժամանակ Հոգով. եւ սորանում հսկեցէք բոլոր հարատեւությամբ եւ աղաչանքով ամեն սուրբերի համար.

12 Եւ մտածելով եկաւ Մարկոս կոչուած Հովհաննէսի մայր Մարիամի տունը, ուր շատերը ժողովուած՝ աղօթք էին անում: 13 Եւ փողոցի դուռը որ թակեց, մի աղախին՝ անունը Հռովդէ մօտ եկաւ, որ ականջ դնէ. 14 Եւ Պետրոսի ձայնը ճանաչեց, ուրախութիւնից դուռը բաց չ՚արաւ. Ներս վազեց և պատմեց, թէ Պետրոսը դռանը կանգնած է: 15 Նորանք էլ ասեցին նորան՝ Գժուել ես. Իսկ նա հաստատում էր թէ այսպէս է. Եւ նորանք ասում էին թէ Նորա հրեշտակն է: 16 Բայց Պետրոսը կանգնած ստէպ դուռը թակում էր. Երբոր բաց արին, տեսան նորան և զարմացան: 17 Պետրոսը ձեռքով նշան արեց նրանց որ լուռ մնան. Եւ պատմեց նորանց, թէ ինչպէս Տէրը բանտից իրեն հանեց. Եւ ասեց. Այս բանը պատմեցէք Հակոբոսին և եղբայրներին. Եւ դուրս եկաւ գնաց ուրիշ տեղ: 18 Եւ երբոր առաւօտ եղաւ՝ մեծ խռովություն կար այն զինուորների մէջ, թէ Պետրոսը ի՞նչ եղաւ: 19 Բայց Հերովդէսը երբոր նորան ուզեց և չ՚գտաւ, պահապաններին քննեց և հրամայեց սպանել. Իսկ Պետրոսը Հրէաստանից գնաց Կեսարիա՝ և մնաց այնտեղ:

III. Եւ Պետրոսը պատմեց նորանց, թէ ինչպէս Տէրը բանտից իրեն հանեց.

Պատմիր, Վկայիր և դավանիր քո փրկության և խաղաղության մասին թե ինչպես Տերը հրաշքներ արեց ձեր կյանքում: